

ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ Տ. ՄԵՍՐՈՊ ՎՐԴ. ՆՇԱՆՆԱՆԻ

Յիշատակարան 1917 Յունուար 1-էն:

Նոյ. 28, Գշ.: Քաղաքապետութեմէն հրաւեր եղաւ հասարակութեանց հոգեւոր պետերու ներկայացուցիչներուն, որ ժամը 11-ին հաւաքուին Դաւթի Բերդին առջեւ ներկայ գտնուելու ընդունելութեան եզրկատակման բանակի ընդհանուր հրամանատար ժեմերալ Էտմոն Ալամպեյի, որ առաջին անգամ պաշտօնապէս պիտի մտնէր Երուսաղէմ: Որոշեալ ժամուան մէկընդհանուր հաւաքուեցան: Մեր կողմէ գացիմք Սահակ կաթողիկոսի ներկայացուցիչ Գիւտ Եպս. ու ես: Ռուսաց Վազմէն միմչեւ Դաւթի բերդը ամզլ. զիմուրմեր երկու շարքի վրայ բարեւի կեցած էին: Երուսաղէմի ամբողջ բնակչութիւնը զիմուրմեան շարքերու ետեւ կեցած էր խիտ խումբերով: Տուներու տանիքները, պատշգամբներն ու պատուհանները լեցուն էին համդիսատեսներով: Զիաւոր ոստիկան զիմուրմեր կարգապահութեամբ կը հսկէին:

Ժամը 12ին ժեմերալը մտաւ Ամզլիացի, Ֆրամսացի ու Իտալացի երեք վաշտ զիմուրմերով: Աջ ու ձախ կողմերէն կ'երթային Ֆրամսացի ու Իտալացի երկու բարձրաստիճան սպաներ, ներկայացուցիչներ համաձայնական տնտեսութեանց բանակներու: Անցքին վրայ երկու կողմը կեցած հոծ բազմութիւնը խանդավառ կը ծափահարէր: Քաղաքի դրան առջեւ (Յոպպէի դուռ) ձիերէն իջած եւ ուղղուեցան դէպի Դաւթի բերդը եւ հոմ բերդի դրան առջեւ բարձր տեղի վրայ հրամանատարը կեցաւ երեսը ժողովուրդին դարձուցած: Ետեւը կեցած էին ներկայացուցիչները եւ փողոցի երկայնքը շրջանակաձեւ տեղ բռնեցին երեք տնտեսութեանց զօրաց վաշտերը: Երուսաղէմի զիմ. ամզլիացի կառավարիչը առաջ անցաւ ու կարգաց հրամանատարի Երուսաղէմի բնակչութեան ուղղած յայտարարութիւնը, ամզլիներէն լեզուով, որուն Ֆրամսերէն, Իտալերէն ու Արաբերէն թարգմանութիւնները կարդացուեցան յաջորդաբար:

Բերդին դրան առջեւ հաւաքուած խումբը, հրամանատարն ու հետեւորդները գացին զօրանցի հրապարակը: Ներկայացուցիչները մէկ կողմ կեցած, զիմ. կառավարիչը զամենք առանձին առանձին ներկայացուց հրամանատարին, որ ձեռքերմին կը սեղմէր եւ իր կարգին կը ներկայացնէր երկու կողմը կայմած Ֆրամս. եւ Իտալ. սպաներուն: Այնտեղ հրապարակին վրայ երեք ազգաց զիմուրմերը իրենց սպաներով, զօրանցք մը կատարեցին ու ամենքը ցրուեցան:

Զիմ. կառավարիչը այսօր Ս. Յարութիւն երթալով Հայոց, Լատինաց եւ Յունաց տեսուչներուն եւ դռնապաններուն պատուիրէր է, որ status quo-ն ամփոփոխ պէտք է պահուի ու վէճերու տեղի չտրուի: Տաճարի դրան առջեւ պահակ զիմուրմեր դրեր է, որ արգիլեն զիմուրմեաններուն ներս մտնելը:

Երիքովի ու Նապլուսի ճամբաներուն վրայ կը շարունակուին ընդհարումները թուրք վերջապահներուն հետ:

Միմչեւ կէսօր հրետամիի ու միթրայտօզի կռիւ եղաւ Ապուտիս գիւղին կողմերը, ուր ապաստանած են եղեր թուրք վերջապահներ, որոնցմէ գերի բռնուած են, կ'ըսուի, եւ մնացեալներն ալ պաշարուած հմարաւորութիւն չունին ազատելու:

Ամզլիական բանակի ներկայութիւնը կենդանութիւն տուած է քաղաքին, ուր շարժում եւ եռուզեռ կը տիրէ: Գերմանացուց գիւղի բացաստանները եւ Լիֆթի կողմերը ծածկուած են զիմուրմներով, թմրամօթի կարգերով, օթոնպիլներով, ձիերով, եւլմ.: Ընդհ. հրամանատարը կը բնակի մեր մեն օթըլը: Կարմիր խաչը հաստատուած է Ռուսաց վազմը: Միւս հիւանդանոցներն ալ առին իրենց հսկողութեան տակ: Փոսթ-հմագրատունը յարդարուեցաւ, ու քանի մը օրէն կանոնաւոր սպասարկութիւն կը սկսի:

Լուր առիմք՝ թէ Օրմանեան սրբազան Պոլիս երթալու դիմում ըրեր է Դամասկոս ճեմալ Փաշայի, որ խոստացեր է կատարել իր խնդիրը:

Նոյ. 30, Եշ.: Թուրք ոյժերը Ռամալլայէն վտարուեր եւ Ապուտիսէն քշուեր են դէպ արեւելք: Վերջոյս տուններուն մէջ թուրքերը դարանի մտած ըլլալով բաւական վնասեր են ամզլ. զիմուրմերու: Երեկ եւ այսօր 300ի չափ վիրաւորներ բերուած են, կ'ըսուի:

Դեկտ. 1, Ուր.: Ամբողջ գիշերը թմրամօթի ու միթրայտօզի ձայներ լսուեցան: Այսօր Ռամալլա գրաւուեր է վերջնականապէս եւ Արեւելքի կողմէն թուրքերը քշուեր են միմչեւ «Բարի Սամարաքիին տունը» կոչուած տեղը, այսինքն Երուսաղէմէն Երիքով տանող ճամբուն կէսը: Բերուած են բաւական թուով գերիներ, որոնց մէջ սպաներ ալ կան:

Դեկտ. 2, Ծր.: Զիթեմեաց լեռան վրայէն թմղամօթի կռիւ Օսմ. ուժերու դէմ, որոնք կ'երեւի դիրքեր բռնած են մոյմ լեռան եւ Երիքովի մէջտեղ գտնուած բլուրներու վրայ ու ձորերու մէջ:

Դեկտ. 3, Կիր.: Զիթեմեաց լեռնէն թմղամօթի ու միթրայեօզի կռիւը շարունակուեցաւ եւ երեկոյեան դէմ սաստկացաւ:

Բամի օրերէ ի վեր կը շրջագայեմք Երուսաղէմու շրջամակները բամակած Ամզլ. զինուորներու մէջ, կը դիտեմք բամակի կազմածները, զէմքերը, հրետամիւ եւլմ. ու կը սքամչամամք: Ամէն իմչ բարեկարգ ու կամոմաւոր, պարէմը առատ, յարմարութիւնները ամթերի: Բոլորովիմ հակապատկերը Օսմ. զինուորներում, որոնք ամբաւական չոր հացով մը կը սմամէիմ, ու հագուադէպ չէր գամոմք տեսնել զրեթէ մերկ եւ բոկ: Կեմդամիները ամսուադութեմէ կմախք դարձած էիմ ու շարժելու ամկարող: Վերջիմ տարիմ ահագիմ թուով սատկեցամ եւ աղքատ գիւղացիիմ խեղճուկ ու վտիտ էշերում կարօտ մմացիմ փոխադրութեամ պէտքերու ծառայեցմելու համար:

Բամակիմ մէջ ահագիմ զեղծումները շատ սովորական էիմ. սպամերը զինուորը կը զրկէիմ ու իրեմք կը հարստամայիմ: Միմչդեռ ամզլիացի զինուորը լաւ կը սմամի, կը հագուի ու գրպամը առատ դրամ ումի, որմէ կը մպաստաւորուի այժմեամ Երուսաղէմի բմակչութիւնը: Ծատ բմական է, որ Օսմամեամ մմամ իմկած բամակ մը չը պիտի կրմայ դիմաւալ Ամզլիականիմ, որ ամկասկած ամեմուրեք պիտի յաջողի առջեւէմ քշելով Թուրքերը, եթէ մոյմիսկ գերմամ կամ աւստրիական ուժեր օգմութեամ փութամ: Իմչպէս այսօր լսեցիմք Ամզլ. օղամաւեր տեսեր են, որ գերմ. զօրաբաժիմ մը Մեռեալ Ծովի արեւելքէմ դէպի հարաւ կը յառաջամայ եղեր Ամզլ. Բամակի ետեւը կտրելու համար: Ամզլիացիք սակայմ կարեւորութիւմ չեն ըմծայեր, զի իրեմք գրաւած դիրքերը ամամկ կ'ամրացմեն, որ զինուորական ոչ մէկ ոյժ կրմայ խախտել, իմչպէս կ'ըսեն իրեմք:

Ամէմ օր քիչ կամ շատ թուրք գերիմեր կը բերուիմ ճակատմերէմ:

Լսեցիմք թէ Թուրքերը Ռամալլա գիւղը ձգելէ առաջ, աւերած են ու բմակիչները մեծ մասամբ սուրէ անցուցած:

(շարունակելի)